Ձև N4

Տեղեկանք

2013 թվականի գերակա խնդիրների և միջոցառումների ծրագրի տարեկան իրականացման արդյունքների

Միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ				
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումները**	**Միջոցառումների կատարման արդյունքները**	**Կարծիք**
1	2	3	4	5
ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	Հավելված1, կետ1	«Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակեր-պության տարածքային ստորաբաժանումների օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքային ստորաբաժանումների օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն 19.02.2013թ. N03/21/664-13 գրությամբ: ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 28.03.2013թ. N335-Ն որոշումը:	
	Հավելված1, կետ2	«Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» ՀՀ կառավարու-թյան որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների հողի հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց և ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված այդ համայնքներում ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելու ծրագիրը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզպետարաններին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը 13.03.2013թ. N03/16/1192-13 գրությամբ: ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 21.03.2013թ. N271-Ն որոշումը: Գումարների տրամադրումը կատարվել է, ինչը նպաստել է սահմանամերձ համայնքների հողերի արդյունավետ օգտագործմանը և գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը: Ծրագիրը շարունակական է:	

	Հավելված1, կետ3	«Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N 728 հրամանագրում լրացում կատարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N 728 հրամանագրում լրացում կատարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը 2013 թվականի ապրիլի 29-ին թիվ 03/21/2265 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն, որը քննարկվել է ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի նիստում և արժանացել հավանության: ՀՀ Նախագահի ՆՀ-189-Ն հրամանագիրը ընդունվել է 2013 թվականի օգոստոսի 5-ին և նշյալ ակտի դրույթները գործում են նույն թվականի օգոստոսի 24-ից:	
	Հավելված1, կետ4	«Տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն 07.06.2013թ. N03/15/3054-13 գրությամբ: «Տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարություն 14.06.2013թ. N03/15/3197-13 գրությամբ: ՀՀ կառավարության աշխատակազմից 24.06.2013թ. ստացվել է թիվ 02/24.6/8944-13 հանձնարարականը՝ Նախագիծը մեկ անգամ ևս քննարկել ՀՀ էկոնոմիկայի, ֆինանսների և արդարադատության նախարարությունների հետ: Քննարկվելուց հետո այն ՀՀ կառավարություն է ներկայացվել 05.08.2013թ. N01/15/4247-13 գրությամբ՝ որով առաջարկվում էր ՀՀ վարչապետի մոտ շահագրգիռ մարմինների մասնակցությամբ կազմակերպել խորհրդակցություն և որոշել հայեցակարգի հետ կապված հետագա ընթացքը: Դեռևս քննարկում տեղի չի ունեցել:	
	Հավելված1, կետ5	«Համայնքների աղքատության գնահատման մոդիֆիկացված համաթիվը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավա-րություն ներկայացնելը	«Համայնքների աղքատության գնահատման մոդիֆի-կացված համաթիվը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն 10.06.2013թ. N03/15/3052-13 գրությամբ: ՀՀ կառավարության աշխատակազմից 13.06.2013թ. ստացված թիվ 02/24.6/8360-13 հանձնարարականի համաձայն՝ Նախագիծը մեկ անգամ ևս քննարկվել է ՀՀ գյուղատնտեսության, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, ֆինանսների և արդարադատության նախարարությունների	

			հետ համատեղ: Քննարկելուց հետո այն ՀՀ կառավարություն է ներկայացվել 24.07.2013թ. թիվ 03/15/3605-13 գրությամբ:	
	Հավելված1, կետ6	«Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N 728 հրամանագրում լրացում կատարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն 10.06.2013թ. N03/15/3053-13 գրությամբ, որը քննարկվել է ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 8-ի նիստում և արժանացել հավանության: ՀՀ Նախագահի ՆՀ-245-Ն հրամանագիրը ընդունվել է 2013 թվականի հոկտեմբերի 14-ին:	
	Հավելված1, կետ7	«Հայաստանի Հանրապետության համայնքների տեղեկատվական բազայի թարմացման նպատակով տվյալների հավաքագրման, ամփոփման և տեղեկատվական բազա մուտքագրման կարգը սահմանելու մասին» իրավական ակտի նախագծի նախապատրաստում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից մշակվել և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 54-Ա հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության համայնքների տեղեկատվական բազայի արդիականացման նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքներից տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագիր մուտքագրման» կարգը, որի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ կառավարություն 06.05.2013թ. N03/15/2335-13 գրությամբ: Որն էլ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ՝ ընդունված է ի գիտություն: Իրականացված աշխատանքների արդյունքում 2014 թվականին հնարավորություն կընձեռնվի յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ դինամիկ կտրվածքով ունենալ http://www.armdevinfo.am/ կայքում տեղադրված էլեկտրոնային բազա, ինչպես նաև օգտագործելով ծրագրի գործիքակազմը՝ կմեծանան տարբեր տեսակի վերլուծություններ իրականացնելու հնարավորությունները (աղյուսակներ, գրաֆիկներ, քարտեզներ և այլն):	
	Հավելված1, կետ8	«Համայնքների խոշորացման մասին» պիլոտային ծրագրի նախագծային փաթեթը ՀՀ կառավարություն ներկայացնելը	09.07.2013թ. N03/16/3636-13 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացվել ՀՀ Սյունիքի և ՀՀ Վայոց ձորի մարզերի համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերը: ՀՀ կառավարությունը դրանք ընդունել է ի գիտություն: Այնուհետև, 20.09.2013թ. N03/16/5153-13 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացվել ՀՀ	

			Վայոց ձորի մարզի Վայքի, Զառիթափի և Ջերմուկի, ՀՀ Սյունիքի մարզի Սառնակունքի և Գորիսի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի, ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի և Ջաջուռի, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի, ՀՀ Լոռու մարզի Թումանյանի և Սարչապետի համայնքային փնջերի խոշորացման ծրագրերը: ՀՀ կառավարության կողմից փաթեթներն ընդունվել են ի գիտություն 22.10.2013թ. N02/24.6/15910-13 գրությամբ:	
	Հավելված1, կետ9	«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրա-պետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը 25.09.2013թ. N 03/16/5257-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի նիստում նախագիծը հավանության է արժանացել և ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողով:	
	Հավելված1, կետ10	«Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգն ի գիտություն ընդունելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգն ի գիտություն ընդունելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն 26.11.2013թ. N 03/18/6508-13 գրությամբ:	
	Հավելված1, կետ11	«ՀՀ համայնքներում գնումների իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքների մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Հայաստանի Հանրապետության համայնքներում գնումների իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքների մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը 10.12.2013թ.թիվ 03/16/6803-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	
	Հավելված1, կետ12	«ՀՀ Սյունիքի մարզի 2014-2017թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«ՀՀ Սյունիքի մարզի 2014-2017թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 14.11.2013թ. N03/15/6256-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավա-րություն:	
	Հավելված1, կետ13	«ՀՀ Շիրակի մարզի 2014-2017թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«ՀՀ Շիրակի մարզի 2014-2017թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 17.12.2013թ. N03/15/7042-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավա-րություն:	

	Հավելված1, կետ14	«ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 25.11.2013թ. N03/15/6474 -13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավա-րություն:	
	Հավելված1, կետ15	«Գյուղական համայնքների 3-րդ համաժողովի նախապատրաստում և անցկացում	Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության «Գյուղական համայնքների 3-րդ համաժողովն» անցկացնելու հետ կապված ծախսերի համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը 19.09.2013թ. թիվ 03/16/5143-13 գրությամբ: ՀՀ կառավարությունը 2013 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների 3-րդ համաժողովն անցկացնելու հետ կապված ծախսերի համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու համար» թիվ 1085–Ն որոշմամբ հաստատել է վերոհիշյալ որոշման նախագիծը: Ս.թ. հոկտեմբերի 3-5-ին Ջերմուկ քաղաքում անց է կացվել գյուղական համայնքների 3-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցում էին պետական կառավարման մարմինների, համայնքների հետ աշխատող տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Յուրաքանչյուր մարզ մասնակցում էր մարզպետի գլխավորությամբ առանձին պատվիրակությամբ, որի կազմում ընդգրկված էին թվով տասը համայնքապետեր և ավագանու հինգ անդամներ: Համաժողովի ընթացքում կազմակերպվել են բանախոսություններ և քննարկումներ հետևյալ 10 թեմատիկ աշխատանքային խմբերում՝ **Թեմա 1.** Տեղական ինքնակառավարման ոլորտ - «Վարչատարածքային բարեփոխումներ, համայնքների խոշորացման գործընթացը, տեսլականը և արդյունավետությունը, Հայաստանում համայնքների խոշորացման խնդիրները և լուծման առաջարկները»: Համայնքների փնջային խոշորացման 14 ծրագրերի ներկայացում (բացի համաժողովին գրանցված	

			մասնակիցներից մասնակցում են փնջերը ձևավորող համայնքի ղեկավարները և ավագանու անդամները): **Թեմա 2.** Ստուգումներ և վարչական հսկողություն - «Տեղական ինքնակառավարման մարմիններում պետական մարմինների կողմից իրականացվող ստուգումների (հսկողության, վերահսկողության) և վարչական հսկողության գործընթացի կանոնակարգում, վարչարարության հիմունքները և վարչական վարույթը համայնքներում»: **Թեմա 3.** Գնումների գործընթաց - «ՀՀ համայնքներում գնումների իրականացման գործընթացի կանոնակարգում»: **Թեմա 4.** Մրցակցային համայնք – «Համայնքների զարգացումը, մրցակցային համայնքի տեսլականը, համայնքների 4-ամյա զարգացման պլանները և դրանց իրավական կարգավորումները. Համայնքի զարգացման ծրագիրը՝ որպես համայնքի ռազմավարական պլանավորման գլխավոր փաստաթուղթ, մեթոդաբանություն»: **Թեմա 5.** Շրջակա միջավայր - «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարում (ԱԶԲ – Ռազմավարական զարգացման պլան, ճանապարհային քարտեզ, երկարաժամկետ ներդրումային ծրագիր, KfW – Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման համակարգ), բարելավման ծրագրեր, խնդիրներն և լուծման առաջարկները»: **Թեմա 5՛.** Շրջակա միջավայր - «Գյուղական համայնքների ներկա բնապահպանական իրավիճակը, բնական ռեսուրսները, բնության հուշարձանները, դրանց ներկա իրավիճակը, խնդիրները և լուծման առաջարկները»: **Թեմա 6.** Զբոսաշրջություն, տնտեսական զարգացում - «Զբոսաշրջությունը որպես գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոն, համայնքային բրենդի ձևավորումը, զարգացումը և խթանումը, համայնքների մրցակցային առավելությունները, ներկա իրավիճակը, խնդիրները և լուծման առաջարկները»: **Թեմա 7.** Գյուղատնտեսություն - «Գյուղատնտեսական քաղաքականությունը, օրենսդրական բացերը և անհրաժեշտ	

			փոփոխությունները, գյուղացիական տնտեսությունների ներկա իրավիճակը, խնդիրները և լուծման առաջարկները»: **Թեմա 8.** Տեղական ինքնակառավարման ոլորտ - «Համայնքի ավագանու գործունեությունը, թափանցիկությունը, իրավասությունների շրջանակը, «Ավագանու ինստիտուտ»-ի ձևավորումը, ընթացիկ խնդիրները և լուծման առաջարկներ»: **Թեմա 9.** ՓՄՁ զարգացումը Հայաստանում - Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմումը և ներկա օրենսդրությունը, գործարարությունը տեղական մակարդակում, ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի աջակցությունը, գյուղական համայնքների զարգացման ծրագրի շրջանակներում լիզինգով տրակտորների և հարակից սարքերի տրամադրման ծրագրի ներկայացում»: **Թեմա 10.** Հողերի կառավարում – «ՀՀ գյուղական համայնքներում հողային օրենսդրության պահանջներին համապատասխան վերահսկողության իրականացման ընթացքում առկա խնդիրների վերհանում և դրանց լուծման ուղիները»: «ՀՀ տարածքում մասնավոր տնտեսվարողների կողմից անշարժ գույքի չափագրման աշխատանքների համար գանձվող վճարների չափը կանոնակարգելու հետ կապված խնդիրները»: Միջոցառումը նպատակ ուներ տեղական ինքնակառավարման համակարգի և գյուղական համայնքների ամենաարդիական խնդիրների քննարկման, փորձի փոխանակման, իրականացվող ծրագրերի և քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով աջակցել գյուղական համայնքների կայուն զարգացմանը:	
	Հավելված1, կետ16	Հայ-ռուսական երրորդ միջտարածաշրջանային համաժողովի նախապատրաստում և անցկացում	2013թ. դեկտեմբերի 1-3-ը Հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ժամանել են ՌԴ 19-ը սուբյեկտների պատվիրակություններ, որոնցից 6-ը՝ նահանգապետերի գլխավորությամբ: ՌԴ պատվիրակությունները հանդիպումներ են ունեցել ՀՀ բոլոր մարզերում համապատասխան գործընկերների հետ և քննարկել են համագործակցության զարգացման և	

			խորացման հեռանկարները: 2013թ. դեկտեմբերի 1-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում անցկացվել է նաև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի շրջանակում գործող միջտարածաշրջանային համագործակցության հարցերով հայ-ռուսական աշխատանքային խմբի երկրորդ նիստը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի և ՌԴ տարածքային զարգացման նախարարի տեղակալ Ս. Նազարովի համանախագահությամբ: Նշված նիստի ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև միջտարածաշրջանային մակարդակով համագործակցության զարգացման հեռանկարներն ու ուղղությունները, այս մակարդակում իրավապայմանագրային դաշտի զարգացման հարցերը: 2013թ. դեկտեմբերի 2-ին Գյումրիում տեղի է ունեցել Հայ-ռուսական միջտարածաշրջանային երրորդ համաժողովի լիագումար նիստը, որին մասնակցել են նաև ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը և ՌԴ Նախագահ Վ. Պուտինը, ովքեր հանդես են եկել ելույթի խոսքերով: Համաժողովին մասնակցեցին երկու պետությունների պետական իշխանության կենտրոնական և տարածաշրջանային մարմինները, բիզնես կառույցները, հասարակական կազմակերպությունները, փորձագիտական և գիտական շրջանակները, զանգվածային լրատվամիջոցները ներկայացնող ավելի քան 600 մարդ: Լիագումար նիստում հիմնական ելույթներով հանդես են եկել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը և ՌԴ տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովը, ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրման և մակրոտնտեսության հիմնական ուղղությունների կոլեգիայի անդամ (նախարար) Տ. Վալովայան, ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը, ՌԴ տարածքային զարգացման նախարարի տեղակալ Ս. Նազարովը և այլոք:	

			Համաժողովի ընթացքում մասնակիցները քննարկել են միջտարածաշրջանային առևտրատնտեսական և հումանիտար համագործակցության հետագա ընդլայնման, տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում, ինչպես նաև Եվրասիական տարածքում ինտեգրվելու գործընթացներում Հայաստանի և Ռուսաստանի փոխգործակցության հարցերը: Դեկտեմբերի 3-ին Երևանում անցկացվել է հայ-ռուսական միջտարածաշրջանային ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին Հայաստանի 10 մարզերը և Ռուսաստանի 9 նահանգները, ինչպես նաև մասնավոր ընկերություններ: Ցուցահանդեսի նպատակն էր ներկայացնել մինչ օրս ունեցած ձեռքբերումները և քննարկել առաջիկա անելիքները՝ առկա ներուժը բացահայտելու և նոր ծրագրեր իրականացնելու նպատակով: Միջոցառման շրջանակներում անցկացվել են նաև կողմերի համար մեծ հետաքրքրություն ներկայացնող կլոր սեղան-քննարկումներ 9 ուղղություններով՝ սկսած էներգետիկայի և տուրիզմի ոլորտներից մինչև հեռահաղորդակցություն և տիեզերական տեխնոլոգիաներ:	
Գերակա խնդիրների իրականացման արդյունքների վերաբերյալ				
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**	**Կարծիք**
1	2	3	4	5
ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	**<u>Հավելված N 2</u>** **կետ1.**	**Տեղական ինքնակառավարման մարմիններում պետական մարմինների կողմից իրականացվող ստուգումների (հսկողության, վերահսկողության) և վարչական հսկողության գործընթացի կանոնակարգում** - Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի պահանջներին	Տեղական ինքնակառավարման մարմիններում պետական մարմինների կողմից իրականացվող ստուգումների (հսկողության, վերահսկողության) և վարչական հսկողության գործընթացի կանոնակարգման նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարության	

		համապատասխանելու նպատակով ՀՀ գործող օրենսդրության վերլուծություն. -ՀՀ մարզպետների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվող վարչական հսկողության ընթացակարգերի նկարագրում՝ «ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N 728 հրամանագրում լրացում կատարելու նպատակով» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագծի նախապատրաստում:	կողմից ուսումնասիրվել են այդ ոլորտին առնչվող իրավական ակտերը, այդ թվում նաև՝ Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի պահանջները: Ուսումնասիրությունները իրականացվել են մասնավորապես. 1. ստուգման ընթացակարգերը ուսումնասիրելու միջոցով՝ իրականացվող ստուգումների միասնականությունը պարզելու նպատակով. 2. վարչական հոսկողության և ստուգումների ընթացակարգերի ընդհանրացման անհրաժեշտության կամ հնարավորության տեսանկյունով. 3. տվյալ բնագավառում միջազգային փորձը ուսումնասիրելու միջոցով: Միջազգային փորձի ուսումնասիրությունը իր մեջ ներառել է. 1. օտարերկրյա պետություններում ստուգման ընթացակարգերի վերհանումը. 2. պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը միջամտության մեխանիզմերի ուսումնասիրումը: Ուսումնասիրության արդյունքները ամփոփվել են տեղեկանքի մեջ և առաջարկություններով կից 2013 թվականի դեկտեմբերի 16-ին N 03/21/7060-13 գրությամբ ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ: Ուսումնասիրվել է նաև ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողությանը վերաբերվող ընթացակարգը՝ այն միասնական դարձնելու նպատակով: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշյալ ընթացակարգը ամրագրված է միայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 7.1 գլխում, այն էլ համառոտ՝ սահմանելով միայն վարչական հսկողության բովանդակությունը, սահմանները, վարչական հսկողությունը իրականացնող մարմինների կազմը և վարչական հսկողության ընթացքում կիրառվող կանխարգելիչ /պրեվենտիվ/ ու միջամտող	

			միջոցառումները: Սակայն բուն ընթացակարգը վարչական հսկողության իրականացման նշյալ օրենքով չի կանոնակարգվել: Ուստի հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի պահանջները, այն է՝ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով, որոշվել է վարչական հսկողության ընթացակարգը սահմանել ՀՀ Նախագահի հրամանագրով: Այդ առումով, քանի որ ՀՀ մարզպետները իրենց վերապահված գործառույթները իրականացնելիս առաջնորդվում են «Մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի կողմից հաստատված ՆՀ-728 հրամանագրով, որոշվել է վարչական հսկողության ընթացակարգը լրացնել Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրում՝ առանձին բաժին լրացնելու միջոցով: Հրամանագրի նախագիծը ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2013 թվականի հունվարի 29-ի N 03/21/304 գրությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվել է գրեթե բոլոր /թվով 25/ պետական մարմինների քննարկմանը, այդ թվում նաև՝ ՀՀ մարզպետների կարծիքին: Նախագծի վերաբերյալ գրեթե բոլոր պետական մարմիններից ստացվել են դրական կարծիքներ, իսկ դիտողությունները տեխնիկական բնույթի են եղել: Նախագիծը ամփոփվել և լրամշակվել է ներկայացված առաջարկություններին համապատասխան: Այնուհետև նախագիծը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության: Ստացվել է նաև ՀՀ արդարադատության նախարարության դրական եզրակացությունը:	

			Հրամանագրի նախագիծը քննարկվել է ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի նիստում և արժանացել հավանության: ՀՀ Նախագահի ՆՀ-189-Ն հրամանագիրը ընդունվել է 2013 թվականի օգոստոսի 5-ին և նշյալ ակտի դրույթները գործում են նույն թվականի օգոստոսի 24-ից:	
	<u>Հավելված N 2</u> **կետ2.**	Համայնքի զարգացման ծրագրի՝ որպես համայնքի ռազմավարական պլանավորման գլխավոր փաստաթղթի կազմման մեթոդաբանության մշակում - միջազգային փորձի ուսումնասիրություն՝ համայնքի զարգացման ծրագրի մշակմանը բնակիչներին մասնակից դարձնելու տեսանկյունից. - համայնքի զարգացման ծրագրին ներկայացվող պահանջների սահմանում («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում»). - համայնքի զարգացման ծրագրի մեթոդական ուղեցույցի մշակում:	Եվրոպայի Խորհրդի տեղական և ռեգիոնալ ժողովրդավարության հանձնաժողովի անդամ երկրներին ուղարկված հարցաշարի պատասխանները ստացվել են, կիրառելի առաջարկությունները, կապված համայնքի զարգացման ծրագրին ներկայացվող պահանջներին, ներառվել են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում և համայնքի զարգացման ծրագրի մեթոդական ուղեցույցում: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը 25.09.2013թ. N 03/16/5257-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Մեթոդական ուղեցույցը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության և Վորլդ Վիժն Հայաստանի ծրագրերի շրջանակներում՝ «Հայաստանի ֆինանսիստների միավորում» ՀԿ, «Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչության (հատկապես՝ բնակչության մասնակցության մասով) փորձագետների հետ համատեղ: Թվով 4 համայնքներում և ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում կազմակերպվել են մեթոդական ուղեցույցի քննարկումներ: Մեթոդական ուղեցույցը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	

			փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո կներկայացվի ՀՀ համայնքներին:	
	<u>Հավելված N 2</u> **կետ3.**	**ՀՀ համայնքներում գնումների իրականացման գործընթացի կանոնակարգում** - փաստացի վիճակի ուսումնասիրություն և վերլուծություն. - ուսումնասիրության արդյունքներից բխող իրավական ակտերի ներկայացում:	ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ՀՀ համայնքներում գնումների գործընթացի հետ կապված առկա խնդիրները վեր հանելու նպատակով, ՀՀ մարզպետների, համայնքների ղեկավարների հետ քննարկել է համայնքներում գնումների իրականացման գործընթացը, վեր են հանվել ոլորտում առկա խնդիրները և դժվարությունները, քննարկվել են դրանց լուծման ուղիները: Բարձրացված խնդիրների քննարկման արդյունքում առաջարկությունները ներկայացվել են պետական լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելիս վերջիններս հաշվի առնելու համար: ՀՀ տարածքային կառավարման նախարարության նիստերի դահլիճում կազմակերպվել է խորհրդակցություն՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ֆինանսների նախարարության, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի, մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի և համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ: Մշակվել է նաև «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» հանրային գնումների կազմակերպման պատվիրատուներին օժանդակող ուղեցույցը, որն ուղարկվել է ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին: Առաջարկվել է այդ ուղեցույցը տեղադրել մարզպետարանների պաշտոնական կայք-էջերում և տեղյակ պահել համայնքների ղեկավարներին: Վերոնշյալ ուղեցույցն արդեն տեղադրված է ՀՀ տարածքային կառավարման նախարարության, մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք-էջերում: ՀՀ համայնքներում գնումների իրականացման	

			գործընթացի կանոնակարգման նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը համագործակցելով «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության և «Ամերիա» ՓԲԸ-ի հետ իրականացրել է համայնքներում գնումների իրականացման գործընթացի փաստացի վիճակի ուսումնասիրություն և վերլուծություն: Ուսումնասիրության նպատակն էր՝ ընտրված համայնքներում վեր հանել գնումների գործընթացի իրականացման տարբեր փուլերի ընթացքում առաջացած(ող) խնդիրները, բացահայտել գնումների գործընթացի առանձնահատկությունները համայնքներում, որոնք պայմանավորված են համայնքի բնակչության թվաքանակով, քաղաքային/գյուղական համայնք լինելու հանգամանքով, աշխարհագրական դիրքով, տարեկան գնումների ծավալով, նախկին փորձառությամբ և այլն: Բացի վերը նշվածից ուսումնասիրությունը պետք է կենտրոնանար «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերի կիրառման հետ կապված համայնքներում առաջացող խնդիրների վրա, ինչպես նաև ներառի ՏԻՄ-երի կողմից գնումների իրականացման գործընթացի հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկություններ և այդ առաջարկություններից բխող միջոցառումներ: Իրականացված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՏԻՄ գնումների գործընթացի հիմնական խնդիրները վերաբերվում են փոքր և միջին (ավելի շատ՝ փոքր) համայնքներին, այն դեպքում, որ մեծ համայնքները հիմնականում կարողանում են օգտագործել իրենց միջոցները խնդիրները լուծելու նպատակով: Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ փոքր համայնքներում առկա են հետևյալ հիմնական խնդիրները՝ -Գիտելիքի և փորձի պակասությունը, ինչն առաջ է բերում մի շարք խնդիրներ՝ ընդհուպ մինչև գնումը շրջանցելու նպատակով հնարավոր ճանապարհների որոնումը և կիրառումը: -Տեղեկատվության պակասը: Փոքր գյուղական	

			համայնքների դեպքում մասնակիցների գրեթե կեսը տեղյակ չէր և/կամ դժվարանում էր հիշել գնման գործընթացը կարգավորող օրենքն ու ենթաօրենսդրական ակտերը, օժանդակ նյութերը, ուղեցույցները: -Օրենքի և օրենսդրական ակտերի հստակեցումների պակասը: ՀՀ համայնքներում «Ամերիա» ՓԲԸ-ի կողմից գնումների իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքների հիման վրա եղել են հետևյալ առաջարկությունները՝ **1.Համայնքների միջև համագործակցության հաստատում,** **2. Տեխնիկական մասնագետների բազայի ստեղծում,** **3.Միջհամայնքային և ներհամայնքային փորձի փոխանակմանն ուղղված միջոցառումների կազմակերպում,** **4.Վերապատրաստման դասընթացների իրականացում:** Հաշվի առնելով վերոգրյալը՝ մասնավորապես չորրորդ առաջարկությունը՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013թ.դեկտեմբերի 24-ի «Համայնքային գնումների կազմակերպման և իրականացման բնագավառում համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագիրը հաստատելու մասին» N 166-Ա հրամանով հաստատված ծրագրով հնարավոր է դարձել 2014թ ընթացքում վերապատրաստելու ՀՀ մարզերի քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերում համայնքային գնումների կազմակերպման և իրականացման պատասխանատու համայնքային ծառայողների:	
	<u>Հավելված N 2</u> **Կետ4.**	**ՀՀ արխիվային գործի բնագավառում բարեփոխումների իրականացման, այդ թվում՝ արխիվային ծառայություն-ների մատուցման էլեկտրոնային համակարգի ներդրման հայեցակարգի մշակում** ՀՀ արխիվային գործի բնագավառում	1. Ստեղծվել է ՀԱԱ և նրա 10 մարզային մասնաճյուղերի և 20 տարածքային ներկայացուցչությունների հետ	

		բարեփոխությունների իրականացման հայեցակարգը ներառում է հետևյալ քայլերը՝ 1) «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ ՀԱԱ) և նրա տարածքային ստորաբաժանումների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ծավալի և որակի վերլուծություն, օտարերկրյա արխիվային ծառայությունների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների փորձի ուսումնասիրում. 2) ֆինանսական միջոցների նախնական գնահատում. 3) քաղաքացիներին արխիվային ծառայությունների մատուցման էլեկտրոնային համակարգի ներդրման նպատակով տեխնիկական վերազինման ծրագրի մշակում. 4) ՀԱԱ և նրա տարածքային ստորաբա-ժանմունքների կորպորատիվ ցանցի ստեղծում և դրա տրամաբանական միացում այն բոլոր պետական մարմինների ցանցերին, որոնք օգտվում են արխիվային տեղեկատվությունից. 5) սոցիալական ապահովության պետական ծառայության և այլ մարմինների հարցումների միջոցով քաղաքացիների սոցիալ-իրավական բնույթի արխիվային տեղեկությունների (տեղեկանքների) էլեկտրոնային տարբե-րակի տրամադրման իրականացման իրավական դաշտի սահմանում. 6) ՀԱԱ-ում էլեկտրոնային հարցումներն ստացող, մշակող, կատարման համար համապատասխան ստորաբաժանմանը տրամադրող և պատրաստի պատաս-խանը հետադարձ հասցեով փոխանցող ստորաբաժանման ստեղծում և արխի-վային տեղեկությունը (այդ թվում՝	կորպորատիվ ցանց, 2014թ. լուծարվող 4 տարածքային ներկայացուցչությունների հետ կապ չի ստեղծվել: 2. Ստեղծվել է ՀԱԱ-ում էլեկտրոնային հարցումներն ստացող, մշակող, կատարման համար համապատասխան ստորաբաժանմանը տրամադրող և պատրաստի պատասխանը հետադարձ հասցեով փոխանցող ստորաբաժանում: 3. Ներդրվել է արխիվային տեղեկություն (այդ թվում՝ միասնական տեղեկության-տեղեկանքի) ստանալու համար դիմումների առցանց՝ ՀԱԱ պաշտոնական վեբ-կայքի միջոցով ներկայացնելու համակարգ: 4. ՀՀ կառավարությունը ընդունել է ՀԱԱ տարածքային ստորաբաժանումների օպտիմալացման ծրագիր: 5. Երևան քաղաքում ներդրվել է քաղաքացիների սպասարկման մեկ «պատուհանի» սկզբունք: 6. Մշակվել և ՀՀ սոցիալական ապահովության ծառայություն, քննարկման է ներկայացվել սոցիալական ապահովության պետական ծառայության և այլ մարմինների հարցումների միջոցով քաղաքացիների սոցիալ-իրավական բնույթի արխիվային տեղեկությունների (տեղեկանքների) էլեկտրոնային տարբերակի տրամադրման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ: 7. ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ արխիվային գործի բարեփոխումների իրականացման հայեցակարգը» և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական հագեցվածության արդիականացման 2014-2016թթ. ծրագիրը»:	

		միասնական տեղեկություն-տեղեկանքը) ստանալու համար դիմումների առցանց՝ ՀԱԱ պաշտոնական վեբ-կայքի միջոցով ներկայացնելու, այդ թվում՝ նաև էլեկտրոնային վճարման համակարգի ներդրում. 7) ՀԱԱ տարածքային ստորաբա-ժանումների քանակի օպտիմալացում, Երևան քաղաքում մեկ «պատուհանի» սկզբունքի ներդրում:		